ԹՈՌՉԵԼՈՒ ԵՐԿԱՆՔ

Երևան 2023

Աշնանային գեղեցիկ մի օր էր անտառում: Ջրարջուկները սովորականի պես խաղում էին բակում: Ընկերներով որոշել էին այդ օրը պահմտոցի խաղալ:

–Մեկ, երկու, երեք...,–շարունակում էր հաշվել Բենը, իսկ Էնն արդեն հասցրել էր հմտորեն տեղավորվել լծակի կողքի թփերում: Նա այնքան լավ էր թաքնվել, որ թփերի տակ շատ երկար մնալու արդյունքում հասցրել էր մոռանալ խաղի մասին՝ լուռ հետևելով բադիկների գեղեցիկ վարժանքներին:



Էննին շատ էր զվարճացնում այն, որ բադիկները թռչելով տարբեր հնարքներ և պտույտներ էին անում: Նա սկսել էր խորհել ու պատկերացնել, թե ինչքան լավ կլիներ, եթե ջրարջուկներն էլ կարողանային թռչել:

Երեկոյան պահմտոցին ավարտվել էր, բայց թռչելու գաղափարը Էննին հանգիստ չէր տալիս:
–Գիտե՞ս, Բեն, ես մտածում եմ, որ միասին կարող ենք թևեր պատրաստել ու թռչել, ինչպես թռչունները:

–Ի՞նչ անմիտ բաներ ես խոսում, Է՛նն: Եթե ասեիր՝ փորձենք լավ լողալ, ինչպես բադերը, դեռ կփորձեի անել դա քեզ հետ, բայց թռչե՞լ: Ավելի անհավանական հեքիաթներ չէիր կարող հորինել,–ծիծաղեց Բենը և քայլեց դեպի տուն:

Էննը նույնպես գնաց տուն,
բայց թռչելու միտքը հիմա էլ
երազում այցելեց նրան: Երազում
Էննը թռչում էր ու թռչում սարերի
վրայով՝ զգալով այն ազատությունը,
որ միայն թռչողը կհասկանար:
Առավոտյան նա բացեց իր աչուկները,
իսկ հոգին դեռ լցված էր երազի
ուրախությամբ: Սակայն հետո հիշեց Բենի
հետ իր զրույցը և որոշեց դատարկ բաներով
չլցնել գլուխը, վեր կացավ և գնաց դպրոց:

Անցավ մի որոշ ժամանակ, և մի գեղեցիկ օր, երբ Էննը տուն էր գալիս դպրոցից, երկնքում տեսավ մի մե՛ծ թռչուն:

–Հապա նայի՛ր, Թո՛մ: Ես այսպիսի թռչուն երբեք չեմ տեսել, այն կարծես չի շարժում թևերը:

–Հիմարի՛կ, սա թռչուն չէ,– պատասխանեց դասընկերը,–սա ինքնաթիռ է: Մի՞թե հայրիկդ չի պատմել քեզ դրանց մասին:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark